

րենց սպասող աշխարհը գոեհիկ խանութն էր արհեստ-  
ներուն եւ կամ կրծուած, կտրուած, գողցուած հողին շեր-  
տը, ուր արիւն պիտի թափուէր պատառ մը հացի համար:  
Մտփի ոչ մէկ փորձառութիւն, քանի որ թաղային վարժա-  
րան մը եւ տարի մըն ալ վանական ընթացք (Արմաշի դպրե-  
վանփին առաջին դասարան) մը միայն ունէի ինծի իբր  
մթերք: Վանփի այդ տարին դեռ կը թափառէր ետեւէս, իմ  
գիւղիս մէջ: Կատէի այդ տարին, ուր կը յիշեմ օրինակած  
ըլլալ հարիւրէ աւելի տետրակ, որոնց կէտը նիւթ ունէր,  
որքան կը կարծեմ, աւետարաններուն մեկնութիւնը, մէկ  
չորրորդը՝ ծանծաղապատում, տժգոյն, անխելք վերակազ-  
մութիւն, մեր եկեղեցիին պատմութեան, գրուած առանց  
ոնի, առանց հոգիի, պարզ անուններու եւ թուականներու  
խաղարկութիւն: Աւելի վերջը, այդ պատմութեան հեղինակը  
(«Ազգապատում», Օրմանեան Սրբազան) գէշ-աղէկ եղա-  
նակ մը ճարեց, վասնզի իր ժողովուրդին իրական կեանքին  
հետ հաղորդակցութիւն մը գտաւ, մեր պատմիչները իբր  
այդ, այսինքն՝ կեանք կարդալով հոգ չէ թէ վիեճակներուն  
նման իբրեւ բանասիրական մրցանքի կրկէս: Հարիւրաւոր  
այդ էջերուն մէջ ես ատեցի այդ պատմութիւնը, այնքան  
խորունկ էր ձանձրոյթը բան չըսող այդ մոայլ, անկանաչ  
պատմումին: Երեսուն լման տարիներ պէտք եղան, այդ  
օրերէն առիւն, որպէսզի սրբագրուէր իմ մէջ այդ սպաննող  
նողկանքը, փարատէր ատելութեան ժանգը ու ես հասկնա-  
յի, սիրէի խանդավառ ու հպարտ, իմ ժողովուրդիս հոգիին  
այդ անգուգական հանդիսարանը, սրտառուչ, քաղցր,  
գեղեցիկ, մա՛նաւանդ իրաւ: Ու խորհիլ, որ սրբագրումի  
սա բախտը զլացուած է շատ շատերու: Հարիւր տարի առաջ,  
օտար եկեղեցիներ կը հրապուրէին մեր դժգոհ միտքերը:  
Յիսուն տարի առաջ, եկեղեցին դադրած էր ինքնիրմէ: Եւ  
սակայն հոն էր. եւ անիկա մեր ամբողջ պատմութեան խոր-  
հըրդանիշ խտութիւնը. ոչ իբր տեղի հոգեւոր պաշարի,  
ծէսի, պաշտամումի, առնուազն շէնքի, կառոյցի հանդէս,  
այլ իբրեւ մարմին, գոյացութիւն՝ կազմուած մեր դարերուն  
ամէնէն ազնիւ տարրերով: Ու այս տարրերը ձայն են, ա-